231 Այնպես պատահեց, որ ինքս մի օր

1. Այնպես պատահեց, որ ինքս մի օր
Հոգով դարերի խորքը գնացի,
Զարմանահրաշ ու արտասովոր
Մի տեսարանի ես հանդիպեցի.
Սևասիրտ մարդիկ՝ տեսքով այլայլված,
Անմեղ մեկին էին տանջում կատաղի:

2. Եվ այնքան անգութ, այնքան գազազած
Չարչարում էին, ծաղրում անտեղի,
Իսկ Նա լուռումունջ, Իր խաչը ուսին,
Մեկի օգնությամբ սարն էր բարձրանում,
Հաճախ էր ծնկում Նա խաչի տակին,
Այդպես տանջվելով՝ վերև էր հանում:

3. Ու շատ ցանկացա ես Նրան օգնել,
Օգնելով՝ խաչը Գողգոթա հանել
Եվ, մոռանալով ամեն-ամեն ինչ,
Նրա հետ մինչև Գողգոթա հասնել:
Ուզեցի ասել. «Ով կյուրենացի,
Հիմա էլ թող, որ ես ինքս տանեմ:

4. Գիտցիր՝ ցավող կա քեզանից բացի,
Ուզում եմ Փրկչիս բեռը ես տանել»:
Սակայն թշվառս, երբ որ սթափվեց
Սիրտս կեղեքող այդ տեսարանից,
Իսկույն պատկերը հիմնովին փոխվեց,
Ես էի գթություն հայցում Հիսուսից:
Ծնկած խաչի տակ, ձեռքերս պարզած՝
Ասում էի. «Օգնի՛ր, Փրկի՛չ իմ, Աստվա՛ծ»: